Սույն գիրքը թվայնացվել է Գրքասեր ՀԿ-ում՝ հայերենով գրականության պահպանման, հանրայնացման և ժամանակակից թվային միջավայրում հասանելի դարձնելու նպատակով:

Կազմակերպության նախաձեռնությունը միտված է հայերեն գրքերի և տեքստերի տարածմանը, ընթերցանության խթանմանը և մշակութային ոչ նյութական ժառանգության պահպանությանը՝ ապահովելով դրանց հասանելիությունը հնարավորինս լայն շրջանակների համար:

Մենք հավատում ենք, որ թվայնացումը ոչ միայն պահպանման միջոց է, այլև գիտելիքի, գրականության և մշակույթի շարունակական փոխանցման կարևոր ուղի:

Գրքասեր ՀԿ-ն գրքերը ձայնագրում և թվայնացնում է բացառապես Ձեր նվիրատվությունների շնորհիվ: Կազմակերպությանը կարող եք օժանդակել հետևյալ հղումով՝

https://grqaser.org/hy/donate

Ստուգված
Հայ գրականություն, Արձակ, Պատմվածք
13+

Շիրվանզադե
Մարուքը և Սարուկը

Այն չէ կարևորը, թե որտեղ է պատահել դեպքը, այլ այն, թե ինչ է պատահել և ինչպես:

Մարուքն ու Սարուկը հարազատ եղբայրներ էին: Մեկը քսան տարեկան էր, մյուսը՝ տասնյոթ տարեկան: Մարուքը գրաշար էր տեղական մի տպարանում, Սարուկը գործակատար էր կաշեվաճառքի խանութում: Երկուսն էլ իրենց այրի մորը պատվում էին, սիրում ու պահպանում հավասար ուժով: Երկուսն էլ տակավին առողջ էին, կենսախինդ ու զվարթ, այն տարբերությամբ, որ Մարուքը մի փոքր նիհար էր, գուցե իր դաժան արհեստի շնորհիվ:

Կլանելով գրեթե համայն աշխարհի ուշքն ու միտքը, պատերազմը, հարկավ, հետաքրքրեց և Մարուքին ու Սարուկին: Ամեն երեկո գրաշարը, տուն վերադառնալով, հետը բերում էր որևէ հայ լրագիր, կարդում էր բարձրաձայն մոր ու եղբոր համար և յուրովի բացատրում անհասկանալի կետերը: Առանձին ոգևորությամբ նա կարդում էր պատերազմի առաջին հերոսների քաջագործությունների մասին: Այդ միջոցներին նրա ձայնը հաճախ հուզմունքից ընդհատվում էր կոկորդում, սևորակ աչքերը վառվում էին ածուխի պես և մրոտ ձեռքերը դողում էին:

Մայրը կամ հառաչում էր, կամ լալիս. նայելով, թե հերոսն անվտանգ է ազատվել, թե սպանվել է: Գալով Սարուկին, լսում էր լուռ, առանց մի բառ արտասանելու, միայն բարկանալով, երբ Մարուքը այս կամ այն պատճառով ընդհատում էր ընթերցումը:

Մայրը նկատում էր, որ քանի իր զավակները շատ են կարդում պատերազմական հերոսությունների մասին, այնքան ավելի լուռ ու մտազբաղ են դառնում: Հոգու խորքում զգում էր, որ այդ բոլորը վերջ ի վերջո նրա գլխին մի փորձանք են բերելու: Բայց չէր բողոքում, վասնզի ինքն էլ արդեն հափշտակվել էր պատերազմի նկարագրություններով:

Մի երեկո Մարուքը, տուն վերադառնալով, հայտնեց մորն ու եղբորը, թե վճռել է մի քանի ընկերների հետ գնալ պատերազմի դաշտը իբրև կամավոր:

Մայրը նախ ցնցվեց, ապա սկսեց լաց լինել, այնուհետև աղերսեց, որ Մարուքը այդ տեսակ հիմարություն չանե և հանգիստ տանը նստե: Ոչինչ չօգնեց: Մարուքը պնդեց, թե պետք է անպատճառ գնա, թե ոչ ոք և ոչինչ չէ կարող նրան հետ կանգնեցնել իր վճռից:

— Դու չես գնալ պատերազմ,— ասաց հանկարծ Սարուկը, որ երկար ժամանակ լուռ էր:

— Ինչո՞ւ,— հարցրեց Մարուքը հեգնական ժպիտով:

— Որովհետև ես եմ վճռել գնալու: Քեզանից շատ առաջ:

— Ուրեմն դուք ուզում եք ինձ կենդանի-կենդանի գերեզման ուղարկել,— գոչեց խեղճ այրին հուսահատությամբ:

Մարուքն աշխատեց համոզել Սարուկին թողնել իր «երեխայական» մտադրությունը, քանի որ ինքն արդեն պայմանավորվել է իր ընկերների հետ: Սարուկն ընդդիմացավ, ասելով, որ ինքն արդեն գրվել է «ուր հարկն է»:

— Ոչ մեկին ձեզանից չեմ թողնի գնալու,— գոչեց այրին,— ոչ մեկին: Որ խեղդեք, սպանեք, չեմ թողնի:

— Ես պետք է գնամ,— գոչեց Մարուքը դրականորեն:

— Ես էլ պետք է գնամ,— գոչեց Սարուկն ավելի դրականորեն:

Թախանձանք, աղերսանք, արցունք, սպառնալիք հուսահատ մոր կողմից — ոչինչ չազդեց ոչ մի և ոչ մյուս զավակի վրա: Այն ժամանակ այրին ճարահատյալ համաձայնվեց մեկին թույլ տալ գնալու, մյուսին՝ ոչ:

Մարուքն ասաց, թե Սարուկը կմնա տանը որպես կրտսեր: Սարուկն ասաց, թե Մարուքը կմնա տանը, որպես մեծ:

— Ես քեզանից ավելի առողջ եմ,— ավելացրեց նա,— դու չես կարող դիմանալ պատերազմի դժվարություններին:

— Ես քեզանից մեծ եմ, ավելի փորձված,— ասաց Մարուքը,— դու դեռ երեխա ես:

Վեճը շարունակվեց մոտ երկու շաբաթ, ամեն երեկո: Երբեմն եղբայրները միմյանց համոզելու համար պատրաստ էին դիմել բռունցքի օգնության: Այսպես, մի անգամ Մարուքն այնպես կատաղեց, որ Սարուկի կրծքին զարկելով, գցեց նրան հատակի վրա: Վայրկենաբար Սարուկը ոտքի թռավ վագրի ձագի պես և

հարձակվեց Մարուքի վրա: Մայրը մի կերպ բաժանեց նրանց, ընկնելով Սարուկի ոտքերի տակ:

Տեսնելով, որ ինքն անզոր է հաշտություն գցելու զավակների մեջ, այրին օգնության կանչեց ազգականներին ու հարևաններին: Այդ էլ չօգնեց: Քանի Մարուքն ու Սարուկը շատ էին վիճում, այնքան յուրաքանչյուրը նրանցից ավելի ու ավելի էր համառում:

Վերջապես մի երեկո Մարուքը առաջարկեց վեճը վճռել հետևյալ միջոցով: Թող երկուսն էլ ցույց տան իրենց դիմացկունությունը ու քաջության չափը, ով նրանցից ավելի թույլ գտնվի, թող նա մնա տանը, իսկ մյուսը գնա պատերազմ:

— Շատ լավ, ես համաձայն եմ,— ասաց Սարուկը գրգռված:

— Խոսք տալի՞ս ես, որ կհպատակվես և էլ չես հակառակի,— հարցրեց Մարուքը:

— Տալիս եմ:

— Երդվիր հայրիկի գերեզմանով:

— Երդվում եմ մայրիկի անունով:

— Երդվիր հայրիկի գերեզմանով:

— Երդվում եմ հայրիկի գերեզմանով:

— Բայց ինչպե՞ս փորձենք մեր քաջությունը սենյակի մեջ:

— Իսկույն կասեմ: Մայրիկ, խնդրում եմ հեռանալ այստեղից:

Այրին վախեցավ: Նա կարծեց, թե երկու եղբայր պիտի կռվեն զենքերով, որովհետև երկուսն էլ արդեն մի-մի ռևոլվեր էին ձեռք բերել:

— Չէ,— ասաց նա,— ես այստեղից չեմ հեռանա: Ինչ որ անելու եք, իմ մոտ արեք:

— Կարելի է,— համաձայնվեց Մարուքը,— բայց հաստատ խոսք տուր, որ զահլես չես տանի քո լաց ու կոծով կամ գոռում-գոչյուններով:

— Ուրեմն, դուք պիտի...

— Ո՛չ, մի՛ վախենար, չենք կռվելու: Խոսք տալի՞ս ես, որ կհամբերես մինչև վերջը:

— Լավ:

— Տես, չխաբես, մայրիկ, պատվի խնդիր կա մեջտեղ: Դու ես լինելու մեր դատավորը:

— Լավ:

Մարուքը վառեց երկու մոմ և դրեց սեղանի վրա: Ապա դառնալով եղբորն ասաց.

— Լսի՛ր, երբ ես կասեմ «մեկ, երկու, երեք» ձախ ձեռիդ ձագ և անանուն մատներն իսկույն կբռնես այդ մոմի բոցի վրա: Ուղիղ բոցի վրա, լսո՞ւմ ես: Ես իմ մատները

կբռնեմ ահա այս մոմի բոցի վրա: Թող այրեն մեր մատները և ով ավելի թույլ գտնվի կամ ետ քաշելով մատները կամ նույնիսկ որևէ խոսքով կամ հնչյունով, ախ ու վախով արտահայտի իր ցավը, նա մնա տանը, իսկ մյուսը գնա պատերազմ: Համաձա՞յն ես:

— Համաձայն եմ,— գոչեց Սարուկն ուրախանալով, վերջապես, որ խնդիրը լուծվում է:

— Ամա՛ն,— աղաղակեց մայրը, ոտքի թռչելով,— մի՛ արեք այդ գժությունը, ես այդ չեմ թողնի:

— Մայրիկ,— գոռաց Մարուքը,— տեսնո՞ւմ ես այդ ռևոլվերը: Լռիր ու տեղդ նստիր:

Այրին գունատ, դողալով նստեց իր տեղը:

— Սկսում եմ,— ասաց Մարուքը հանդիսավոր,— մեկ երկու, երեք...

Անմիջապես երկու եղբայրների ձախ ձեռքերի ճագ և անանուն մատները բարձրացան բոցերի վրա:

Այրին հազիվ զսպեց իրեն՝ որպեսզի չճչա օձից խայթվածի պես:

Բոցերը բաժանվեցին երկու հավասար մասերի և նրանց դեղնագույն լեզվակները սողալով վեր, փաթաթվեցին Մարուքի և Սարուկի մատներին օղակների պես:

Առաջին վայրկյանին երկուսն էլ ժպտացին այն տարօրինակ ժպիտով, որ հատուկ էր կախաղանից չերկնչող դատապարտյալին: Նրանք իրենց սևորակ աչքերը հառեցին միմյանց երեսին, որպես իրարու վրա հարձակվելու պատրաստ վագրեր: Ապա նրանց դեմքերն ստացան լուրջ, խորհրդավոր արտահայտություն:

Սկզբում նրանց մատները սևացան մուրից, ապա կամաց-կամաց սկսեցին կարմրել: Երկուսի դեմքերն էլ գունատվեցին, որովհետև ցավն արդեն զգալի էր:

Մայրը նայում էր լուռ, անշարժ՝ ինչպես արձան, գունատ՝ ինչպես դիակ:

Սոսկալի էր նայել խորին լռության մեջ անշուք սենյակի կիսախավարի մեջ այդ երեք կերպարանքներին, որոնց անշարժությունը լռության հետ ուրվականների տպավորություն էին գործում:

Ձավակները գերբնական ճիգն էին անում խեղդելու իրենց մարմնավոր ցավը, մայրը ճգնում էր զսպելով հոգեկան տանջանքը:

Հանկարծ լսվեց մի սուր ճիչ, և այրիի անշունչ դիակը փռվեց հատակի վրա:

Սարուկը անշարժ էր, նրա աչքերը շարունակ հառած էին եղբոր երեսին:

— Բավական է,— գոչեց Մարուքը, ետ քաշելով բոցից սևացած, կարմրած մատները, որոնց միսն արդեն խորովվել էր,— դու ինձ հաղթեցիր:

Եվ նա սկսեց ուշքի բերել մորը:

Մյուս օրը նա համբուրելով Սարուկին ճանապարհ դրեց դեպի պատերազմ: